ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«13» մայիսի 2014թ. N 109-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԵՎ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԵՐԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՕԿՆՈԳԻՆԱ ՎՆԱՍԱՏՈՒԻ ԴԵՄ ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ կազմակերպություն) 2014 թվականին մայիսի 8-ի N 041 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Արագածոտնի և Կոտայքի մարզերի տարածքում կատարված մոնիտորինգի արդյունքները՝ օկնոգինա վնասատուի դեմ պայքարի միջոցառումներ իրականացնելու նպատակով

Հրամայում եմ՝

1. Հաստատել 2014 թվականին օկնոգինա վնասատուի դեմ քիմիական պայքար իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի և Կոտայքի մարզերի համայնքներին անհատույց հատկացվող «Ցիպեր մաքսի» բույսերի պաշտպանության միջոցի բաշխացուցակը՝ համաձայն հավելվածի:

2. Կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Ավագյանին՝

1) ապահովել «Ցիպեր մաքսի» բույսերի պաշտպանության միջոցի տեղափոխումը և անհատույց հանձնումը Արագածոտնի և Կոտայքի մարզերի համայնքների ղեկավարների լիազորած անձանց՝ սույն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածով սահմանված չափաքանակներով,

2) յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո մինչև հաջորդող ամսվա 10-ը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության

աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն ներկայացնել հաշվետվություն «Ցիպեր մաքսի» բույսերի պաշտպանության միջոցի օգտագործված քանակության վերաբերյալ:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել նախարարի տեղակալներ Ս. Գալստյանին և Ռ. Մակարյանին:

ՆԱԽԱՐԱՐ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված

ՀՀ գյուղատնտեսության նախարարի

2014թ. մայիսի 13-ի N 109-Ա հրամանի

ԲԱՇԽԱՑՈՒՑԱԿ

2014 ԹՎԱԿԱՆԻՆ ՕԿՆՈԳԻՆԱ ՎՆԱՍԱՏՈՒԻ ԴԵՄ ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԵՎ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԵՐԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՏԿԱՑՎՈՂ «ՑԻՊԵՐ ՄԱՔՍԻ» ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԻ

N	Մարզը և համայնքը	Աշխատանքի ծավալը (հա)	Բույսերի պաշտպանության միջոցի քանակը (լիտր)
Արագածոտնի			
1	Երնջատափ	200	40
2	Շողակն	100	20
3	Եղիպատրուշ	100	20
4	Ձորագլուխ	100	20
5	Թթուջուր	100	20
6	Վարդենիս	100	20
7	Չքնաղ	75	15
Ընդամենը մարզում		775	155
Կոտայքի			
1	Թեղենիք	300	60
2	Բուժական	200	40
3	Արզական	400	80
4	Սարալանջ	200	40
5	Արագյուղ	200	40
Ընդամենը մարզում		1300	260
Ընդամենը		2075	415